



Կարող է Հայաստանը դառնալ
տարածաշրջանային առաջնորդ
կրթության ոլորտում:

Մանուկ Հերզնյան
«Տնտեսություն եւ արժեքներ»
հետազոտական կենտրոն

Հունիսի 11, 2007թ., Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ


Հայաստանը այսօր կանգնած է շարունակական աճի նոր աղբյուրների փացահայտման առջեւ

- Հայաստանի տնտեսությունը աճում է արագ տեմպերով, սակայն այդ աճի աղբյուրները խոցելի են եւ չեն ստեղծում միջազգային մրցունակության հիմքեր:
 - 2004-2006թ. տնտեսական աճի հիմնական շարժիչները եղել են շինարարությունը (աճի 43.5%-ը) եւ գյուղատնտեսությունը (աճի 13.1%-ը):
- Դրա վկայությունն է մրցունակության ցածր ցուցանիշները ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության զեկույցի:
 - Համաշխարհային մրցունակության ցուցիչով Հայաստանը զբաղեցնում է ընդամենը 82-րդ տեղը:
- Հայաստանը կանգնած է աճի նոր աղբյուրների ստեղծման եւ զարգացման առջեւ: Այն հնարավոր է միայն երկրի հստակ դիրքավորման եւ համահունչ ռազմավարության իրականացման պայմաններում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄ



Հայաստանը կանգնած է տնտեսական ճեղքում իրականացնելու մարտահրավերի առջև



Մրցունակության շարժիչները լինելու են գլոբալ ճյուղերը

Յուրահատուկ մարդկային կապիտալ


- Տարածաշրջանի վերասահմանում
- Դիրքավորում
- Որոշակի գործառույթների հատկորոշում

- Ճյուղերի նպատակադրում
- Սեգմենտների հատկորոշում
- Ռեսուրսների բաշխում
- **Լծակներ**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ




Ռազմավարական նպատակադրումը ենթադրում է հիմնական արժեքային առաջարկի ներկայացում, որպես տարածաշրջանային դերակատարման հիմք:



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԼԾԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ





Համապատասխան դիրքավորման կենսունակությունը ապահովելու եւ տարածաշրջանային մրցակցության մեջ առավելություն ստանալու համար անհրաժեշտ է առանձնացնել հիմնական մրցակցային լծակները:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՃԵՂՔՄԱՆ ԼԾԱԿ

Այսօրվա համաշխարհային տնտեսական համապատկերում կրթությունը հանդիսանում է մրցունակության եւ, հետեւաբար, կայուն բարեկեցության հիմնարար նախադրյալներից:




ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԼԾԱԿ

Հայաստանում կրթությունը պետք է դառնա ամենագերակա ոլորտը



Հարաբերական առավելություն



Մրցակցային առավելություն

Առկա է բնական (մարդկային) ռեսուրսը

- 100% հանրակրթության մեջ ներգրավվածություն
- կրթական ավանդույթներ
- գիտնականների դեռևս մեծ քանակություն
- ընտանեկան արժեք (կրթության վրա ծախսերը մեծ մաս են կազմում ընտանեկան բյուջեներում)
- գեներ

Պոտենցիալ հնարավորություն

- հանրակրթության տարածաշրջանային լավագույն չափանիշների ապահովում
- առաջնորդություն որոշակի մասնագիտությունների գծով:
- բարձր. կրթությունը դինամիկ տնտ. ոլորտի վերածում
- մի քանի գիտական ուղղություններով առաջնորդություն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Առաջնորդության համար Հայաստանին անհարաժեշտ է էական թռիչք:



Ցուցանիշներ	Հայաստան	Էստոնիա	ՌԴ	Իսրայել
Կրթության վրա ծախսերը ՀՆԱ-ի մեջ (%), 2005թ.	2.75	5.70*	3.71	7.30*
Բարձրագույն կրթությունում ընդգրկվածների բաժինը (%), 2004թ.	26,2	65,1	68.20	56.50
Բնական գիտ. և ճարտար-ն մասնագիտությամբ ԲՈՒՀ ընդունվածների քանակը ընդհ. մեջ (%), 2004թ.	6,54	21,99		29.64
Կրթական համակարգի որակ, 2006թ. (Տեղ/125)	88	31	54	22
Մաթեմատիկայի և բնական գիտությունների դասավանդման որակ, 2006թ. (Տեղ/125)	71	18	43	11
Բիզնես կրթության որակ, 2006թ. (Տեղ/125)	109	30	84	14
Վերապատրաստման ծառայությունների առկայությունը ՀՀ-ում, 2006թ. (Տեղ/125)	104	27	69	10
Աշխատակիցների վերապատրաստման տարածվածություն, 2006թ. (Տեղ/125)	104	27	99	23
Հանրակրթական դպրոցների որակ, 2006թ. (Տեղ/125)	83	21	51	24

Աղբյուրը՝ WB, WEF, WDI-Online,

*2003թ. տվյալներ

ՄԻ ՔԱՆԻ ԷԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

- ✓ Կրթությունը գնալով գլոբալացվում է, հայտնվում են նոր համաշխարհային խաղացողներ, որոնց թիրախը ամբողջ աշխարհն է: Հիմնական շարժիչներն են տեխնոլոգիան, մարդկանց, կապիտալի եւ ապրանքների ազատ շրջանառությունը:
- ✓ Օտարերկրյա ուսանողների ներգրավումը բարձր որակավորում ունեցող աշխատակիցների ներգրավման ռազմավարության մաս է: Սկսած 2000թ.-ից բոլոր երկրների հաշվարկով արտասահմանցի ուսանողների թիվը աճել է 41%-ով, կազմելով միջին տարեկան 9% աճ:
- ✓ Սրվող մրցակցություն տաղանդների համար: Առավել ցայտուն է տեխնոլոգիական ճյուղերում:
- ✓ Անգլերենը ավելի է տարածվում, որպես միջազգային ուսումնառության լեզու:
- ✓ Ամենաշատ միջազգայնացված առարկաները, նրանք են որոնք պահանջում են.
 - ✓ կապեր (օր. գործարարություն)
 - ✓ ունիվերսալ գիտելիք (քանակական; բնական գիտություններ)
 - ✓ նվիրում (միկրոբիոլոգիա)
 - ✓ անորոշություն (սոցիոլոգիա, փիլիսոփայություն)
- ✓ Մեծ թվով երկրներ (ներառյալ զարգացած) փնտրում են նոր կրթական մոդելներ, որոնք կխթանեն ստեղծագործականությունը, նորարարական մտածելակերպը եւ արդյունավետությունը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ




Տարածաշրջանի թիրախումը ենթադրում է բազմագործոն վերլուծություն: Համադրության համար անհրաժեշտ է սկսել “լայն” տարած-նից: Կրթության տեսանկյունից Եվրաս. խաչմերուկը առավել հեռանկարային կարող է լինել:

ԱՊՀ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	Եվրասիական խաչմերուկ
<p><i>Հիմնավորում</i></p> <p>Ընդհանուր պատմական ենթատեքստ, տնտեսական նմանատիպ առանձնահատկություններ, սերտ տնտեսական կապեր:</p> <p>10 երկիր</p> <p>Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Մոլդովա, Բելառուս, Վրաստան, Ադրբեջան, Ուզբեկստան, Արդստան, Տաջիկստան</p>	<p><i>Հիմնավորում</i></p> <p>Առավել նշանակալի հաջողություններ անցման շրջանում: Ընկալելի որպես Հայաստանն ընդգրկող տարածաշրջան:</p> <p>15 երկիր</p> <p>Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Սլովենիա, Սլովակիա, Բուլղարիա, Ռումինիա, Բոսնիա, Ալբանիա, Սերբիա, Խորվաթիա, Մակեդոնիա</p>	<p><i>Հիմնավորում</i></p> <p>Հայաստանն ընդգրկող պատմական տարածաշրջան, աշխարհագ. խաչմերուկ Եվրասիական կարևոր առևտրային ճանապարհներին:</p> <p>8 + երկիր</p> <p>Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան, Իրան, Սիրիա, Լիբանան, Իսրայել, Հորդանան</p> <p>+ այլ արաբական երկրներ</p>

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ

Անհարժեշտ է իրականացնել կրթական ծառայությունների համապարփակ կարողությունների եւ “տարածաշրջանային բացերի վերլուծություն”:




ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՑՈՂ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ “Ծառայությունների բացերի” վերլուծությունը պետք է ցույց տա հնարավոր թիրախավորման ոլորտները

- Մերձավոր Արեւելքի նավթարդյունաբերող երկրները խոշորամասշտաբ ներդրումներ են անում ՏՀՏ ոլորտի մեջ, սակայն ունեն մասնագետների եւ զարգացած կրթական հաստատությունների պակաս:
- Գլոբալ վերազգային կորպորացիաները հետազոտությունների եւ մշակումների ստորաբաժանումները սփռում են աշխարհով մեկ՝ տարածաշրջանային կենտրոնացմամբ: Դրանք հետազայում դառնում են տվյալ ոլորտներում կրթական եւ գիտական մասնագիտացման հիմք:
- Ռուսաստանի եւ Ուկրաինայի բնակչությունն արագ տեմպերով նվազում է, առաջանում է մասնագիտական ռեսուրսների կարիք որոշակի հատվածներում:
- Ազգային մշակույթների հիմքի վրա ստեղծված մշակութային արտադրանքներն ավելի պահանջարկված են դառնում:

ԿՐԹԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ



Եվրոպական մոդելը լավ հենքային / շրջանակային պայմաններ է առաջադրում, սակայն անհրաժեշտ է այն լրացնել յուրահատուկ բովանդակությամբ:



Համապատասխան
քլաստերային
նախապատվություններին

Ռեսուրսների
կենտրոնացում

Որոշակի ոլորտներում
տարածաշրջանային
առաջնորդ լինելու
հնարավորություն

Օրինակներ.

Տեղեկատվական տեխնոլոգիաներ -
միկրոսիսեմաների մշակում


Ճարտարագիտություն - ավտոմատացված
համակարգերի նախագծում

Բժշկություն – սրտաբանություն

Հանքահումքային արդյունաբերություն –
մետաղների կորզում

ՄՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾՈՆԸ

Սփյուռքի հետ փոխհարաբերության մոդելը պետք է լինի
“հանգույցի եւ շառավիղների” մոդելը



Հայաստանը կարող է դառնալ սփյուռքի համաշխարհային ցանցի ազգային կրթական ծառայությունների մատուցման կենտրոն: Լեզվի, պատմության, մշակույթի, կրոնի, ավանդությունների հաղորդումը կարող է դառնալ մեծ կրթական գործունեության ոլորտ: Այն տալու է նաև համապատասխան մասշտաբ, որն անհրաժեշտ է որպեսզի այն տնտեսապես արդարացված լինի:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ

Առավել արդյունավետ կարող է լինել “կղզյակներ-կամուրջներ-մայրցամաքներ” մոդելը:



Կղզյակներ

Գերազանցության
կենտրոններ

- Մի քանի կրթական հաստատում կամ ուղղութիւնում կենտրոնացված ներդրումներ՝ լավագույն մոդելների կիրառմամբ:
- Արագ, թեկուզև փոքր, հաղթանակները շահադրդում են երկարաժամկետ նպատակներին ձգտելու համար

Կամուրջներ

Մասշտաբայնացում

- Այդ կենտրոնները պետք է կապվեն միմյանց տարածման ազդեցությունների մեծացման համար:
- Կապերը կարող են ստեղծվել մարդկանց եւ համատեղ ծրագրերի միջոցով:
- Անհրաժեշտ է գնահատել արդյունքները ավելի մեծ մասշտաբով կիրառելու համար:

Մայրցամաքներ

Կրթական մոդել

- Ամբողջական կրթական մոդելի կառուցում հիմնված փորձի վրա:
- “Գերազանցության կենտրոնների” փորձի հիման վրա կարող են մշակվել կրթական նոր չափորոշիչներ եւ մոտեցումներ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



Կրթությունն ավելին է քան տնտեսական կամ այլ գործառույթը: Այն խտացված արտապատկերում է ինքնությունը եւ ձեւավորում աշխարհում դերակատարման նախապայմանները:

Բարեկեցությունը ազգի ընտրության արդյունք է:

Մեր ընտրությունները պայմանավորված են մեր մտածելակերպով եւ արժեքային համակարգով:

Կրթական համակարգը կոչված է փոխանցելու այն հիմնարար արժեքները, որոնք հնարավոր են դարձնում ազգային իմաստավորված հարատեւումը: